

**ՆԱԽՆԱԿԱՆ ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ
ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ
ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ - 2020-2021 ՈՒՍԱՐԻ**

9 - ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Տևողությունը՝ **120** րոպե:

Գնահատումը կատարվում է **20** միավորանոց համակարգով:

Բոլոր առաջադրանքներն ունեն մեկ ճիշտ պատասխան:

Ճիշտ պատասխանը գնահատվում է 1(մեկ) միավոր:

1. Որո՞նք էին բանակի խնդիրները հին դարերում.

ա. ապահովել երկրի անվտանգությունը, հակահարված տալ թշնամուն, գրավել նոր տարածքներ:

բ. ապահովել երկրի անվտանգությունը, հակահարված տալ թշնամուն, կատարել դաշնագրային պարտավորությունները:

գ. ապահովել երկրի անվտանգությունը, հակահարված տալ թշնամուն, մասնակցել զորավարժություններին:

դ. հակահարված տալ թշնամուն, մասնակցել ամրաշինական շինությունների կառուցմանը, մասնակցել զորավարժություններին:

2. Հնագույն Հայաստանում բանակը կազմված էր

ա. կամավորներից

բ. ազատներից

գ. ստրուկներից

դ. ֆիդայիներից

3. Հալիծորի ճակատամարտը տեղի է ունեցել՝

ա. 1727 թ.

բ. 1827 թ.

գ. 1992 թ.

դ. 1728 թ.

4. Ղարաքիլիսայի ճակատամարտը տեղի է ունեցել՝

ա. 1920 թ. հունիսի 24-ից 28-ը:

բ. 1918 թ. մայիսի 25-ից 30-ը:

գ. 1918 թ. մայիսի 24-ից 28-ը:

դ. 1919 թ. մայիսի 25-ից 30-ը:

5. Հնագույն Հայաստանում ո՞վ էր համարվում բանակի գերագույն գլխավոր հրամանատարը

ա. Թագավորը

բ. Մարզպանը

գ. Սպարապետը

դ. Հազարապետը

6. Սղնախները ե՞րբ և որտե՞ղ են ստեղծվել

ա. Սյունիքում 17-րդ դար

բ. Խամսայում 18-րդ դար

գ. Արցախում 18-րդ դար

դ. Արցախում և Սյունիքում 17-18-րդ դ.

7. Ի՞նչ է գրոհը.

ա. Հարձակման վճռական պահը և բարձր լարվածության կրակով ստորաբաժանումների արագընթաց և անդադար տեղաշարժն է՝ հակառակորդի կենդանի ուժի և կրակային միջոցների ջախջախման կամ գրավման նպատակով:

բ. Ստորաբաժանումների արագընթաց և անդադար տեղաշարժն է՝ հակառակորդի կենդանի ուժի և կրակային միջոցների ջախջախման կամ գրավման նպատակով:

գ. Բարձր լարվածության կրակով ստորաբաժանումների անդադար տեղաշարժն է՝ հակառակորդի կենդանի ուժի և կրակային միջոցների ջախջախման կամ գրավման նպատակով:

դ. Հարձակման վճռական պահը և ստորաբաժանումների անդադար տեղաշարժն է՝ հակառակորդի կենդանի ուժի և կրակային միջոցների ջախջախման կամ գրավման նպատակով:

8. 1918թ. մայիսյան հերոսամարտերի ժամանակ ո՞վ էր հայկական զորքերի սպարապետը

ա. Զրիստափոր Արարատյանը
գ. Պողոս Բեկ-Փիրումյանները

բ. Արամ Մանուկյանը
դ. գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբեկյանը

9. Ավտոմատի քանդելը լինում է.

ա. լրիվ և ոչ լրիվ
գ. բաց և փակ

բ. կիսաբաց և կիսափակ
դ. լրիվ և կիսատ

10. ԿԱ-74 ավտոմատի գնդակի մահաբեր կարողությունը՝

ա. 1300 մ. բ. 1350 մ. գ. 1250 մ. դ. 1500 մ.

11. Չինվորական երդման տեքստը հաստատվել է ՀՀ Գերագույն խորհրդում՝

ա. 1991 թ. դեկտեմբերի 27-ին բ. 1992 թ. հունվարի 28-ին
գ. 1991 թ. փետրվարի 23-ին դ. 1991 թ. սեպտեմբերի 21-ին

12. Ի՞նչ նպատակով են զինված ուժերում կիրառվում խրախուսանքները և կարգապահական տույժերը:

ա. Չինվորական ծառայությունը հստակորեն կազմակերպելու զինծառայողների մեջ բարոյահոգեբանական ու մարտական կայուն հատկանիշներ դաստիարակելու նպատակով:

բ. Չինվորական ծառայությունը հստակորեն կազմակերպելու, զինծառայողների կարգապահությունը ամրապնդելու և նրանց մեջ բարոյահոգեբանական ու մարտական կայուն հատկանիշներ դաստիարակելու նպատակով:

գ. Չինվորական ծառայությունը հստակորեն կազմակերպելու, զինծառայողների կարգապահությունը ամրապնդելու նպատակով:

դ. Չինվորական ծառայությունը հստակորեն կազմակերպելու նպատակով:

13. Նշել սխալ պատասխանը: Տեղանքը ըստ ռելիեֆի բնույթի լինում է՝

ա. հարթվայրային բ. բաց գ. լեռնային դ. բլրային

14. Ո՞րն է համարվում կարգապահական խախտում (զանցանք):

ա. Չինվորական ծառայության ընթացքում զինծառայողի կողմից թույլ տրված դիտավորյալ կամ անզգույշ հակաիրավական գործողությունը:

բ. Չինվորական ծառայության ընթացքում զինծառայողի կողմից թույլ տրված դիտավորյալ կամ անզգույշ գործողությունը:

գ. Չինվորական ծառայության ընթացքում զինծառայողի կողմից թույլ տրված հակաիրավական գործողությունը:

դ. Չինվորական ծառայության ընթացքում զինծառայողի կողմից թույլ տրված դիտավորյալ կամ անզգույշ անօրինական գործողությունը:

- 16. Բանակում հրամանատարի (պետի) հրամանը (կարգադրությունը կամ ինդրանքի ձևով հանձնարարված առաջադրանքը) չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար նախատեսված է կարգապահական տույժ՝**
- ա.** զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում, կամ կարգապահական վաշտ ուղարկելը՝ մինչև քսան օր տևողությամբ:
 - բ.** արտահերթ վերակարգի նշանակում, կամ զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում, կամ կարգապահական վաշտ ուղարկելը՝ մինչև քսան օր տևողությամբ:
 - գ.** արտահերթ վերակարգի նշանակում, կամ զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում:
 - դ.** կարգապահական վաշտ ուղարկելը՝ մինչև քսան օր տևողությամբ:

17. Ինչպե՞ս է ազդում լեռնային տեղանքը մարտական գործողությունների վրա:

- ա.** Դժվարացնում է ռազմական տեխնիկայի տեղաշարժը, դիտարկումը, կողմնորոշումը և կրակ վարելը: Միևնույն ժամանակ ապահովում է զորքերի աննկատ տեղաշարժը և քողարկումը: Առավել նպաստավոր է պաշտպանության համար:
- բ.** Հեշտացնում է կողմնորոշումը և կրակ վարելը: Ապահովում է զորքերի աննկատ տեղաշարժը և քողարկումը: Նպաստավոր է հարձակման համար:
- գ.** Ապահովում է զորքերի աննկատ տեղաշարժը և քողարկումը: Նպաստավոր է պաշտպանության համար և ապահովում է դիտարկումը:
- դ.** Դժվարեցնում է ռազմական տեխնիկայի կիրառումը, դիտարկումը, կողմնորոշումը կրակակ վարելը: Ապահովում է զորքերի աննկատ տեղաշարժը:

18. Հակառակորդի տանկերի և զրահամեքենաների դեմ պայքարելու համար մոտոհրաձգային ջոկն ունի՝

- ա.** Ինքնաձիգ, հակատանկային կառավարվող հրթիռային համալիր (ՀԿՀՀ), ձեռքի հակատանկային նռնականետ, ձեռքի հակատանկային նռնակ, հետևակի մարտական մեքենայի (ՀՄՄ) հրանոթ:
- բ.** Հակատանկային կառավարվող հրթիռային համալիր (ՀԿՀՀ), ձեռքի հակատանկային նռնականետ, ձեռքի հակատանկային նռնակ, հետևակի մարտական մեքենայի (ՀՄՄ) հրանոթ և կալշնիկովի ձեռքի գնդացիր:
- գ.** Հակատանկային կառավարվող հրթիռային համալիր (ՀԿՀՀ), ձեռքի հակատանկային նռնականետ, ձեռքի հակատանկային նռնակ, հետևակի մարտական մեքենայի (ՀՄՄ) հրանոթ, ինքնաձիգ և կալաշնիկովի ձեռքի գնդացիր:
- դ.** Հակատանկային կառավարվող հրթիռային համալիր (ՀԿՀՀ), ձեռքի հակատանկային նռնականետ, ձեռքի հակատանկային նռնակ, հետևակի մարտական մեքենայի (ՀՄՄ) հրանոթ:

19. Նշանառությունը՝

ա. Նշանահատիկի և նշանաձողիկի ճիշտ համադրումն է:

բ. Չենքի փողին անհրաժեշտ ուղղություն տալն է՝ թիրախը խոցելու համար:

գ. Աջքը համատեղել նշանահատիկի և թիրախի կենտրոնի հետ:

դ. Չենքի փողը դեպի թիրախը ուղելն է:

20. Մագնիսական սլաքի ցույց տված ուղղությունը, որն անցնում է կանգնած կետով, կոչվում է.

ա. մագնիսական հորիզոնական

բ. մագնիսական միջօրեական

գ. մագնիսական ազիմուտ

դ. մագնիսական ուղղություն

Ուշադրություն: Ճիշտ պատասխանները նշված են դեղին գույնով: